ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ. հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

# *«Հայաստանի բուհերում սովորող ուսանողների շրջանում հանդուրժողականության չափում.մեդիայի ազդեցությունը հանդուրժողականության ձևավորման վրա»*

# հետազոտության արդյունքների վերլուծություն

Երևան 2018

Բովանդակություն


Ամփոփագիր ........ 3

Հետազոտության մեթոդաբանություն ........ 4

Հետազոտության նպատակը ........ 4

Հետազոտության մեթոդը ........ 5

Հետազոտության ընտրանքը ........ 5

Հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական նկարագիրը ........ 7

Հետազոտության արդյունքներ ........ 10

Ինչպե՞ս են մեկնաբանում հանդուրժողականություն և անհանդուրժողականություն երևույթները ուսանողները ........ 10

Ո՞ր հաղորդումներն են եթերում արծարծում հանդուրժողականության թեման ........ 15

Ինչպե՞ս կպահեն իրենց ուսանողները տարբեր իրավիճակներում. հանդուրժողականության չափում ........ 20

Որքանո՞վ են ուսանողները համաձայն դատողությունների հետ. հանդուրժողականության չափում ........ 25

Մեդիա – հանդուրժողականություն. փոխազդո՞ղ հասկացություններ ........ 39

Եզրահանգումներ ........ 45

Հավելված 1 ........ 47

Հավելված 2 ........ 57

## Ամփոփագիր

«Հայաստանի բուհերում սովորող ուսանողների շրջանում հանդուրժողականության չափում.մեդիայի ազդեցությունը հանդուրժողականության ձևավորման վրա» հետազոտությունը Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն»-ի կողմից 2018 թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված ուսումնասիրություն է, որը նպատակ ունի չափել հայաստանյան բուհերի ուսանողների շրջանում հանդուրժողականությունը և մեդիայի ազդեցությունը դրա ձևավորման գործում՝ անդրադառնալով նրան, թե ինչպես են մեկնաբանում հանդուրժողականություն և անհանդուրժողականություն հասկացությունները ուսանողները։

13 պետական և միջպետական բուհերի ուսանողների շրջանում արված քանակական դեմ առ դեմ հարցումների միջոցով ստացված տվյալները հնարավորություն են տալիս նաև հասկանալ, թե ինչ ձևով են միմյանց հետ կապված հանդուրժողականություն երևույթը և մեդիայից օգտվելու հաճախականությունը։ Հետազոտության շրջանակներում կիրառվել են դատողությունների գնահատման, տարբեր իրավիճակներում հնարավոր գործողությունների ուսումնասիրման և այլ տեխնիկաներ, որոնք թույլ են տալիս հանդուրժողականության երևույթը ուսումնասիրել ավելի կոնտեքստուալ։

Վերլուծության սկզբնամասում շարադրված են հետազոտության մեթոդաբանությունը և հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական նկարագիրը։ Այնուհետև ներկայացված է, թե ինչպես են մեկնաբանում ուսանողները հանդուրժողականություն և անհանդուրժողականություն երևույթները, և որ հաղորդումներն են հիշում, որոնք այս երևույթները արծարծում են եթերում։ Սրան հաջորդում է տարբեր իրավիճակներին և դատողություններին ուսանողների արձագանքի վերլուծությունը։ Նախքան հիմնական եզրահանգումները ներկայացված է նաև մեդիայի և հանդուրժողականության կապը արտահայտող վերլուծական հատվածը։

# Հետազոտության մեթոդաբանություն

## Հետազոտության նպատակը

Հանդուրժողականությունը, լինելով բազմաչափ կատեգորիա, դժվար է միանշանակ սահմանել և մեկնաբանել: Որոշ դեպքերում այս հասկացությունը բացատրվում է որպես անհանդուրժողականության հականիշ՝ այդպես էլ հստակ չընդգծելով հասկացությունների միջև սահմանը: Իսկ շատ դեպքերում սահմանվում է նույնարմատ կատեգորիաներով՝ ինչպես օրինակ՝ որպես հանդուրժելու կարողություն: Այս ամենը իհարկե չեն արտահայտում հասկացության ամբողջ իմաստային շերտերը: Այս հետազոտությունը նպատակ ունի պարզել, թե ինչպես են հասկանում հանդուրժողականություն և անհանդուրժողականություն հասկացությունները երիտասարդները՝ և հատկապես նրանց առավել ակտիվ հատվածը՝ ուսանողությունը: Այս ամենից զատ, հատուկ կարևորություն ունի դիտարկել, թե մեդիան ինչքանով է ազդում հանդուրժողականության ձևավորման վրա. արդյոք տարբեր մեդիատեսակներից օգտվելը կապված է հանդուրժողականության չափի հետ:

Այս նպատակին հասնելու համար առաջ են քաշվել մի շարք հետազոտական խնդիրներ՝

- ✓ Պարզել ուսանողների շրջանում հանդուրժողականություն և անհանդուրժողականություն երևույթների ընկալումները
- ✓ Պարզել ուսանողների հանդուրժողականությունը մի շարք երևույթների հանդեպ
- ✓ Պարզել, թե եթերում հեռարձակվող որ հաղորդումներն են ըստ ուսանողների հանդորժողականության և անհանդուրժողականության թեման արծարծում
- ✓ Պարզել մեդիայի օգտագործման կապը հանդուրժողականության հետ

Այսպիսով, տվյալ հետազոտության նպատակն է չափել հայաստանյան բուհերի ուսանողների շրջանում հանդուրժողականություն երևույթը և մեդիայի ազդեցությունը դրա ձևավորման գործում՝ կիրառելով սոցիոլոգիական

հետազոտություններին և հատկապես քանակական մեթոդներին բնորոշ զանազան տեխնիկաներ։

## Հետազոտության մեթոդը

Հետազոտության համար կիրառվել է քանակական գործիքակազմ՝ դեմ առ դեմ հարցման մեթոդը։ Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ թեման նուրբ է հետազոտման համար և դասական ձևով հնարավոր չէ ամբողջապես չափել հանդուրժողականությունը, այդ պատճառով կիրառվել են դատողությունների գնահատման, տարբեր իրավիճակներում հնարավոր գործողությունների ուսումնասիրման և այլ տեխնիկաներ, որոնք թույլ կտան այլընտրանքային ուղիով վերհանել հետաքրքրող նպատակը։

## Հետազոտության ընտրանքը

Հետազոտության շրջանակներում իրականացվել է բազմաստիճան շերտավորված ընտրանք, որի համար որպես գլխավոր համախմբություն առաջին շերտում վերցվել են ՀՀ բոլոր պետական և միջպետական բուհերի ուսանողները (80010)։ Երկրորդ շերտում ընտրվել են առավել շատ և առավել քիչ ուսանողներ ունեցող բուհերը՝ ապահովելով նաև մարզային ներկայացվածություն (50803)։ Ընտրանքային համախմբության մեջ ընդգրկված 773 ուսանողները ներկայացնում են հետևյալ կրթական հաստատությունները՝ Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալաասարան, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Գեղարվեստի պետական ակադեմիա, Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Եվրոպական համալսարան, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղ, Գավառի պետական համալսարան։

Ընտրանքում ներառվել են նշված բուհերի բոլոր ֆակուլտետների և բոլոր կուրսերի ուսանողները՝ ապահովելով ներկայացուցչականություն և հնարավորություն տալով ամենատարբեր մասնագիտությունների տեր ուսանողների մասնակցել հարցմանը: Արդյունքում ուսանողներին կարելի է խմբավորել հետևյալ մասնագիտական ուղղություններում.




*Գրաֆիկ 1. Հարցվողների բաշխվածությունը ըստ մասնագիտական ուղղությունների*

Ինչ վերաբերում է հարցվողների կուրսերին, ապա պատկերը հետևյալն է.

| | |
|---|---|
| Բակալավրիատ 1-ին կուրս | 15.3 |
| Բակալավրիատ 2-րդ կուրս | 18.9 |
| Բակալավրիատ 3-րդ կուրս | 19.7 |
| Բակալավրիատ 4-րդ կուրս | 18.9 |
| Մագիստրատուրա 1-ին կուրս | 14.0 |
| Մագիստրատուրա 2-րդ կուրս | 12.7 |
| Այլ | 0.5 |

*Աղյուսակ 1. Հարցվողների բաշխվածությունը ըստ կուրսերի*

Այլ կատեգորիայում են ընդգրկված հեռակա ուսուցման կամ բուհից յուրահատկությունից ելնելով 5-րդ կուրսի ուսանողները:




*Գրաֆիկ 2. Հարցվողների բաշխվածությունը ըստ կուրսերի*

## Հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական նկարագիրը

Նախքան հետազոտական բուն արդյունքներին անդրադառնալը, հետաքրքիր է նախ տեսնել հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական տվյալները և վերլուծության ժամանակ կիրառել այն՝ առանձին չափումներում դրանց հետ կապեր տեսնելու համար:

Ինչ վերաբերում է հարցվողների սեռային բաշխմանը, ապա ընտրանքում ընդգրկված են 41% արական և 59% իգական սեռի ներկայացուցիչներ:




*Գրաֆիկ 3. Հարցվողների բաշխվածությունը ըստ սեռերի*

Հարցվողների տարիքային նկարագիրը հիմնականում տատանվում է 17-25-ի մեջ (հարցվողների 95.3%-ը այս տարիքային խմբում է)։ Մնացյալ 3.9%-ը (0.8%-ը հրաժարվել է նշել իր տարիքը) ավելի մեծ տարիքի է. կան 26-ից բարձր տարիքի հարցվողներ, իսկ ամենամեծ տարիքով հարցվողը 39 տարեկան է։

Հարցվողների բնակության վայրը ընդգրկում է ամբողջ Հայաստանի տարածքը՝ հաշվի առնելով, որ հարցումներն իրականացվել են 5 մարզերում, իսկ Երևանին մոտ գտնվող մարզերի ուսանողները շարունակում են բնակություն հաստատել այդտեղ՝ ամեն օր գալով և վերադառնալով։




*Գրաֆիկ 4. Հարցվողների բաշխվածությունը ըստ բնակության վայրի*

Ինչ վերաբերում է հարցվողների ծննդավայրին, ապա այն ընդգրկում է նաև Արցախը, ինչպես նաև Հայաստանից դուրս երկրներ, որոնք կոդավորել են «Այլ» տարբերակի ներքո։




*Գրաֆիկ 5. Հարցվողների բաշխվածությունը ըստ ծննդավայրի*

## Հետազոտության արդյունքներ

### Ինչպե՞ս են մեկնաբանում հանդուրժողականություն և անհանդուրժողականություն երևույթները ուսանողները

Ուսանողների վերաբերմունքը հանդուրժողականություն և անհանդուրժողականություն երևույթների նկատմամբ հասկանալու համար նրանց տրվել է բաց հարց՝ խնդրելով պատասխանել՝ թե ինչ է հանդուրժողականությունը և անհանդուրժողականությունը: Հնչած պատասխանները համակարգելու համար կիրառվել է վերաբերմունքի ուսումնասիրման ABC մոդելը: Տեսականորեն յուրաքանչյուր վերաբերմունք ունի 3 կոմպոնենտ – A – զգայական (affective), B – վարքային (behavioral), C – cognitive (ճանաչողական):

Զգայական կոմպոնենտը ենթադրում է երևույթի նկատմամբ վերաբերմունք՝ հիմնված զգացմունքների, տրամադրությունների, էմոցիաների վրա: Վարքային կոմպոնենտը ենթադրում է երևույթի նկատմամբ վերաբերմունք՝ հիմնված նախկին գործողությունների և վարքային փորձի վրա: Ճանաչողական կոմպոնենտը ենթադրում է երևույթի նկատմամբ վերաբերմունք՝ հիմնված գիտելիքի և հավատալիքների վրա:

Յուրաքանչյուր վերաբերմունք կարող է ընդգրկել 1-ից ավելի կոմպոնենտներ՝ որևէ մեկի գերակայությամբ: Այդ պատճառով վերլուծության ժամանակ օգտագործվել են AB – զգայական - վարքային, AC – զգայական - ճանաչողական, BC – վարքային - ճանաչողական տարբերակները:

Նախ և առաջ անդրադառնանք այն սահմանումներին, որոնք տրվել են հարցվողների կողմից: Այսպիսով, հանդուրժողականությունը ուսանողները սահմանել են.

- Սեփական սկզբունքներին հավասար դասելը ուրիշի սկզբունքների հետ
- Սեփական խղճի և մտքի ներդաշնուկությունը, որն անդրադառնում է և քո և շրջապատի նկատմամբ
- Մարդու իրավունքների ընդունում, մարդը որպես գերակա արժեք, իսկ մարդու անհատականության կոսմետիկ կողմերը չպետք է խանգարեն շփվելուն

- Հասունության նշան՝ երբ մարդը իմաստուն է դառնում (տարիք, ինքնաակտուալիզացիա), ամեն ինչին չի պատասխանում ագրեսիայով
- Մյուսներին հասկանալ, փորձել դիմացինի դրության մեջ մտնել մինչև որոշակի սահման
- Փոխադարձ հարգանքի մթնոլորտ, որտեղ որևէ կողմի արժեհամակարգ չի ստորադասվում մյուսի նկատմամբ
- Հարգել դիմացինի կարծիքը, մինչև վերջ լսել, գնալ զիջումների, փոխհամաձայնություն տալ
- Կամքի ուժի հիման վրա ստեղծած բնավորությունների հատկանիշ, որով օժտված են արդարացի դատող և խելացի մարդիկ
- Գիտակցումը, որ քեզանից տարբեր մարդիկ կարող են ապրել քո կողքին
- Քո կարծիքը, դիրքորոշումը հայտնել՝ հաշվի առնելով դիմացինի ազատությունը, ինքնուրույնությունը և աճ ունենալու երազանքը
- Ունենալ սեփական կարծիք բայց կարողանալ լսել ու փորձել հասկանալ, եթե նույնիսկ չես ընդունում
- Տարբեր հանգամանքների դեպքում պատասխան ռեակցիան է տարբեր իրադրություններին՝ զսպվածության տարբեր աստիճանների ցուցադրելով
- Սեփական տեսակետներին զուգահեռ ընդունել այլակարծությունը, իսկ եթե համաձայն չենք դրանց տալ հակափաստարկներ
- Չնայած ինչ-որ սխալների, ռացիոնալ նայելը դեպքերին, իրադարձություններին
- Հանդուրժողականությունը ինձ համար անողնաշարավորությանը հավասար մի երևույթ է
- Երբ անկախ ամեն ինչից ընդունում ես դիմացինի կարծիքը և քո կարծիքը չես փորձում փաթաթել նրա վզին և շատ իրավիճակներում զիջում ես
- Ինձ համար հանդուրժողականությունն այն է, երբ վեճի ժամանակ ես չեմ հավասարվում դիմացինի մակարդակին, քանի որ ամեն ինչ անցողիկ է
- Հանդուրժողականությունը այն է, երբ ոչ մի անհատ չի պարտադրում իր կարծիքը դիմացինին և չի էլ պարտադրվում ընդունել դիմացինի կարծիքը

- Միմյանց կարծիքները լսելու և հարգելու ունակություն, որը շատ ժամանակ թույլ է տալիս խուսափել խնդիրներից
- Հանդուրժողական է այն մարդը որին երբ ցավացնում են պատասխան չի տալիս որ կոնֆլիկտ չլինի
- Մարդու հզոր դիմացկունություն արտաքին միջավայրի ազդեցության առաջ
- Երբ հանուն ուրիշի, ոտնահարվում են քո ցանկությունները և կատարվում են նրա քմահաճույքները
- Կարելի է աչք փակել դիմացինի անտեղի կոպտության վրա
- Ժամանակի լարված սպասողական ամբողջություն
- Հանդուրժողականությունը այն է, երբ ինչ-որ չափով չի համապատասխանում քեզ, բայց այնքան հարազատ է, որ ընդունում ես նրան
- Հանդուրժողականությունը այն է, երբ համապատասխան արարքի դիմաց չես ստանում համապատասխան պատասխան: Օրինակ, մարդիկ, ովքեր հանդուրժում են իմ երգեցողությունը...
- Ազգերի, ընտանիքի, սեռերի միջև փոխհարաբերությունների ներդաշնակությունը
- Դիմացինի կարծիքը լսելու, հասկանալու, ըմբռնելու կարողությունը, ընդհանրապես դիմացինի էնպես ինչպես կա ընկալելու կարողությունը
- Ցանկացած մարդու իրավունքներին և հայացքներին ռելյատիվիստորեն մոտենալն է
- Անկախ մարդու կրոնից, սեռական պատկանելությունից, մշակույթից, ֆիզիկական և մտավոր կարողություններից դիտարկել որպես քեզ պես մարդ
- Սեփական վարքը, գործողությունները դրսևորելու և ինքնակարգավորելու կարողություն
- Անձի անկարողությունը կամ անտարբերությունը պայքարելու արտաքին ազդակների հետ

- Սեփական անձի ճիշտ գնահատականը տալով հասարակության մեջ այլ անձանց հետ փոխհարաբերվելու սուբյեկտիվ դրսևորումը
- Պետք է ուսումնասիրել տվյալ հարցը, հասկանալ խնդրի առաջխաղացման պատճառները և հասկանալ, երբ կարող է լուծվել խնդիրը (ժամանակային առումով)

Ուսանողները նաև սահմանել են, թե ինչ է իրենց համար անհանդուրժողականությունը.

- Եսասիրության հաղթանակը հարգանքի նկատմամբ
- Քո սեփական կարծիքը ցանկանում են փոխել միայն նրա համար, որ չի համապատասխանում իրենց կարծիքին
- Սեփական անձին ճիշտ գնահատականը տալով հասարակության մեջ այլ անձանց հետ փոխհարաբերվելու սուբյեկտիվ դրսևորման կատարյալ բացակայությունը
- Անձի ցուցաբերվող ագրեսիան սեփական անձնական նորմերը անփոփոխ պահպանելու համար
- Բնավորության գիծ, մարդու մեջ ձևավորված կարծրատիպ, որ եթե չի համապատասխանում իր հայացքներին և մտածելակերպին, ուրեմն ներելի չէ
- մարդու հոգևոր թուլություն արտաքին միջավայրի ազդեցության առաջ
- Երբ դիմացինը քեզ չի հարգում՝ քո կարծիքը, մտածելակերպը, վարվելակերպը
- Առանց դիմացինին լսելու և հարգելու քայլեր կատարելը
- Դիմացինի արժանապատվության նկատմամբ ոտնձգություն
- Հունից դուրս գալ, ասել այն ամենը ինչ պատրաստ չէի ասել
- Ագրեսիվ պահվածք մեկ այլ կրոնի, ազգի մշակույթի նկատմամբ

- Անհանդուրժողականությունը որոշակի ուժերի կողմից սերմանված ատելություն է այլ ազգերի հավատի, ռասայի և ազգային փոքրամասնությունների հանդեպ
- Ոչ օբյեկտիվ վերաբերմունք այլ անձանց նկատմամբ և նրանց իրավունքների և ազատության սահմանափակման փորձ
- Սեփական ես-ի գերիշխանությունը ուրիշների նկատմամբ
- Երբ գերադասում են մեր սկզբունքները ավելի շուտ, քան այն ամենը որը միգուցե ավելի կարևոր է
- Քո լիազորություններից դուրս ինչ-ինչ հատկությունները հաշվի առնելով, թույլ տալ քեզ բացասական վերաբերվել
- Իրենց կարծիքը ճիշտ թե սխալ առանց հաշվի առնելու դիմացինին, առաջ են տանում
- Երբ չի փորձում հասկանալ դիմացինին, դրսևորում է ագրեսիա և փորձում է ինքնահաստատվել ուրիշների միջոցով
- Երբ չկա փոխադարձ հարգանք, վստահություն, երբ յուրաքանչյուրը իր ցանկություններով է առաջ գնում չհարգելով դիմացինին
- Այլ անձանց որոշումների և քայլերի հարգանքի բացակայությունը
- Երբեմն ազնվության դրսևորում, երբեմն տգիտության դրսևորում
- Անհանդուրժողականությունը ցույց է տալիս մարդու գռեհիկությունը, նյարդայնությունը և թուլությունը
- Որոշ մարդկանց կողմից այլ անձանց փոքրամասնությունը ստիպել ընդունել իրենց կարծիքը և ապրելակերպը

ABC մոդելի տեսքը ամբողջապես ներկայացված է Հավելված 1-ում և Հավելված 2-ում պատկերված աղյուսակներում:

## Ո՞ր հաղորդումներն են եթերում արծարծում հանդուրժողականության թեման

Հետազոտության շրջանակներում նպատակ ունեինք հասկանալ նաև, թե, ըստ ուսանողների, հեռուստաեթերում հեռարձակվող որ հաղորդումներն են արծարծում հանդուրժողականության և անհանդուրժողականության թեմաները: Նախքան բուն հաղորդման անունը տալը, փորձել ենք հասկանալ, արդյոք ուսանողները հիշում են նման հաղորդում, թե ոչ, ապա խնդրել նշել կոնկրետ հաղորդման անունը: Երկու ենթահարցերի պարագայում էլ հարցվողների ճնշող մեծամասնությունը (82.4% և 79.3%) չեն մտաբերել նման հաղորդում: Պատկերն այսպիսին է.

*Աղյուսակ 2. Հանդուրժողականության թեման արծարծող հաղորդումներ*

| | |
|---|---|
| Ոչ, չեմ հիշում | 82.4% |
| Այո, հիշում եմ | 17.6% |

*Աղյուսակ 3.Անհանդուրժողականության թեման արծարծող հաղորդումներ*

| | |
|---|---|
| Ոչ, չեմ հիշում | 79.3% |
| Այո, հիշում եմ | 20.7% |

Հարկ է նշել, որ հարցը տրվել է հարցման վերջամասում, երբ ուսանողները արդեն ամբողջովին ընկալել են՝ ինչ ասել է հանդուրժողականություն, իսկ նախորդող հարցում անգամ փորձել սահմանել այն: Այսինքն, այն մտայնությունը, որը «Ոչ, չեմ հիշում»-ի բարձր տոկոսը կարող է պայմանավորված լինել ուսանողներին անակնկալի բերելով, ինչի արդյունքում նրանք չեն կարողացել կողմնորոշվել, ըստ էության, հերքվում է:

Այնուհետև անդրադարձ է կատարվել բուն հաղորդումներին: Հանդուրժողականություն արծարծող հաղորդումների պարագայում հարցվողների 17.6%-ն էլ պատասխանել հարցին՝ փորձելով նշել հաղորդման անունը: Նրանցից 6.1%-ը այդպես էլ չեն կարողացել հիշել անունը, իսկ 3.5%-ը տվել է ոչ թե կոնկրետ հաղորդման անուն, այլ ընդհանրական նկարագիր. վերջիններս խմբավորված են «Այլ» պատասխանի ներքո: Աղյուսակ 4-ում կարող եք տեսնել ընդհանուր պատկերը.

| | | | |
|---|---|---|---|
| «Կիսաբաց լուսամուտներ» | 1.2 | «Ես կամ» | 0.8 |
| «Եթե բոլորը» | 0.5 | «1-ին տաղավար» | 0.5 |
| «Մարդկային գործոն» | 0.4 | «Пусть говорят» | 0.4 |
| «Ընտանեկան պատմություններ» | 0.4 | «Բարի լույս» | 0.3 |
| «Եկեք հասկանանք» | 0.3 | «Ազատ գոտի» | 0.3 |
| «Առավոտ լուսո» | 0.3 | «Կյանքը շարունակվում է» | 0.3 |
| «X ֆակտոր» | 0.1 | «Armcomedy» | 0.1 |
| «Սուր անկյուն» | 0.1 | «Ուրվագիծ» | 0.1 |
| «Мужское/женское» | 0.1 | «Հատուկ ռեպորտաժ» | 0.1 |
| «Կոդը կողքի» | 0.1 | «Բանակում» | 0.1 |
| «Понять простить» | 0.1 | «Չէին սպասում» | 0.1 |
| «Վրիժառուները» | 0.1 | «Ֆուլ հաուս» | 0.1 |
| «Ամենախելացին» | 0.1 | «Կյանքի կարուսել» | 0.1 |
| «Ոսկե ցլիկը» | 0.1 | «Կին Ցան» | 0.1 |
| «Կյանքի կարուսել» | 0.1 | «Animal planet» | 0.1 |
| «Իմ տունը» | 0.1 | «Հարրի Փոթեր» | 0.1 |
| «The choice» | 0.1 | «Познер» | 0.1 |
| «Прямой эфир» | 0.1 | | |
| ԴՊ | 6.1 | Այլ | **3.5** |

| | |
|---|---|
| Կրոնական հաղորդումներ (Շողակաթ, Հ1, Հ3) | 0.8 |
| Լրատվական հաղորդումներ | 0.5 |
| Սերիալներ | 0.5 |
| Գովազդներ | 0.5 |
| Քրիստոնեական ֆիլմեր | 0.2 |
| Մուլտֆիլմեր | 0.2 |
| Մոտիվացնող հոլովակներ | 0.3 |
| Հարցազրույցներ | 0.1 |
| Պարային հաղորդումներ | 0.1 |
| Ամերիկյան ու եվրոպական հաղորդումներ | 0.1 |
| Культура ալիք | 0.1 |
| Շանթի հաղորդումներ | 0.1 |

*Աղյուսակ 4. Հանդուրժողականություն արծարծող հաղորդումները*

Այսպիսով տեսնում ենք, որ ուսանողները հիմնականում թվել են մի քանի հաղորդումներ, որոնք թե՛ հայկական հեռուստաեթերի մաս են կազմում, թե՛ ռուսական, թե՛ արևմտյան: Հայկական հեռուստաեթերի հաղորդումներին հայացք գցելով՝ նկատում ենք, որ դրանք որևէ կոնկրետ հեռուստալիքով հեռարձակվող հաղորդումներ չեն, այլ ընդգրկում են տարբեր հեռուստալիքների եթերացանկը: Հաղորդումների ցանկը դիտարկելիս՝ չի նկատվում նաև թեմատիկ օրինաչափություն, քանի որ առկա են թե՛ կրթական, թե՛ երաժշտական հաղորդումներ, ֆիլմեր, բանավեճեր և այլն:




*Գրաֆիկ 6. Հանդուրժողականություն արծարծող հաղորդումները*

Անհանդուրժողականության թեման արծարծող հաղորդումների պարագայում հարցին պատասխանել է հարցվողների ընդհանուր թվի 20.7%-ը: Նրանցից 5.5%-ը դժվարացել է հիշել կոնկրետ անունը, նույնքան տոկոսն էլ տվել է ընդհանրական պատասխան, որը, ինչպես նախորդ դեպքում, այս դեպքում ևս խմբավորվել է «Այլ» պատասխանի ներքո: Աղյուսակ 5-ում էլ ներկայացված են անհանդուրժողականության թեման արծարծող հաղորդումները.

| | | | |
|---|---|---|---|
| «Կիսաբաց լուսամուտներ» | 3.9 | «Ընտանեկան պատմություններ» | 0.6 |
| «Սուր անկյուն» | 0.6 | «Пусть говорят» | 0.4 |
| «Նռան հատիկ» | 0.4 | «02 հաղորդում» | 0.4 |
| «Ֆուլ Հաուս» | 0.4 | «Մարդկային գործոն» | 0.3 |
| «Այրված անուրջներ» | 0.3 | «60 րոպե» | 0.3 |
| «Մերժվածը» | 0.3 | «Երկրե երկիր» | 0.1 |
| «Երեկոյան Ազոյան» | 0.1 | «3 OFF» | 0.1 |
| «X ֆակտոր» | 0.1 | «Առավոտ լուսո» | 0.1 |
| «Armcomedy» | 0.1 | «1-ին տաղավար» | 0.1 |
| «Ազատ գոտի» | 0.1 | «Եթե բոլորը» | 0.1 |
| «Կին Ցան» | 0.1 | «Կարգին հաղորդում» | 0.1 |
| «Comedy Club» | 0.1 | «Անտիվիրուս» | 0.1 |
| «Բանակում» | 0.1 | «На самом деле» | 0.1 |
| «Наедине со всеми» | 0.1 | «Мужское/женское» | 0.1 |
| «Եկեք հասկանանք» | 0.1 | | |
| ԴՊ | 5.5 | Այլ | **5.5** |

| | |
|---|---|
| Սերիալներ (մասնավորապես՝ հայկական և հնդկական) | 2.5 |
| Ֆիլմեր (մասնավորապես՝ սարսափ ֆիլմեր, արտասահմանյան) | 1.1 |
| Լուրեր (հատկապես՝ կենտրոն ալիքի լուրերը) | 0.6 |
| Պետրոս Ղազարյանի բոլոր հաղորդումներ | 0.4 |
| քաղաքական հաղորդումներ | 0.3 |
| Կրոնական հաղորդումներ (մասնավորապես՝ Շողակաթով) | 0.2 |
| Հումորային ծրագրեր | 0.1 |
| Թոք շոուներ | 0.1 |
| Ադրբեջանի վերաբերյալ ղեբատներ | 0.1 |
| Տեսահոլովակ, երաժշտություն | 0.1 |

*Աղյուսակ 5. Անհանդուրժողականություն արծարծող հաղորդումները*

Այս պարագայում ևս ունենք թե՛ հայկական, թե՛ այլ հեռուստաեթերներ ներկայացնող հաղորդումներ, որոնք հեռարձակվում են ամենատարբեր հեռուստալիքներով: Չնայած նրան, որ այս հարցին ավելի շատ հարցվող է պատասխանել, քան հանդուրժողականության թեման արծարծող հաղորդումների պարագայում, տարբերակները ավելի քիչ են, քանի որ ավելի հաճախ են կրկնվել հարցվողների շրջանում: Հաղորդումների թեմատիկ օրինաչափություն այս դեպքում ևս նկատելի չէ:




*Գրաֆիկ 7. Անհանդուրժողականություն արծարծող հաղորդումները*

Հետաքրքիր է, որ հաղորդումների մեծ մասը նշվել են և՛ որպես հանդուրժողականություն, և՛ որպես անհանդուրժողականություն արծարծող հաղորդումներ, ինչը նշանակում է, որ ուսանողները այդ հաղորդումներում նկատել են և՛ առաջինի, և՛ երկրորդի տարրեր: Միևնույն ժամանակ, դրանց տոկոսային բաշխվածությունը կարող է տարբերվել. վառ օրինակ է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդումը, որը երկու պարագայում էլ առաջին հորիզոնականում է՝ կտրուկ առաջ անցնելով հաջորդող հաղորդումներից, բայց հանդուրժողականության թեման արծարծելու առումով՝ 1.2%, իսկ անհանդուրժողականության պարագայում՝ 3.9%: Իհարկե կա նաև այն մտայնությունը, որ ուսանողների համար հանդուրժողականություն և անհանդուրժողականություն երևույթները միմյանց սերտաճած են, ուստի մեկն ասելով նկատի ունեն նաև մյուսը, և հստակ տարաբաժանում դնելով միևնույնն է խոսում ենք նույն երևույթի տարբեր կողմերի մասին:

## Ինչպե՞ս կպահեն իրենց ուսանողները տարբեր իրավիճակներում. հանդուրժողականության չափում

Հետազոտության շրջանակներում ուսանողներին ներկայացվել են նաև մտացածին իրավիճակներ և դրանց ժամանակ հնարավոր գործողությունների շարք: Իրավիճակները չափում են ուսանողների հանդուրժողականությունը կոնկրետ իրավիճակում իրենց պատկերացնելու միջոցով: Հարցվողները իրավունք են ունեցել նաև ավելացնելու իրենց տարբերակը, արդյունքում դրանցից հաճախակի հնչածները որպես հերթական պատասխան առանձնացվել են, իսկ քիչ հնչածները խմբավորվել «Այլ» տարբերակում:




Դատողությունը նպատակ ունի չափել ուսանողների հանդուրժողականությունը բռնության հանդեպ: Հնչած տարբերակները դասավորվել են հանդուրժողականից անհանդուրժողական պատասխանի, և համապատասխանաբար գունավորվել՝ առավել ընդգծելու համար անհանդուրժողական պատասխանները:

| | |
|---|---|
| Անտարբեր կհեռանամ, քանի որ յուրաքանչյուր ծնող ինքն է որոշում ինչպես դաստիարակել իր երեխային | 37.8 |
| Կսկսեմ քննարկել տարածքում գտնվող անձանց հետ՝ հասկանալու համար ինչպես վարվել | 7.5 |
| Կմիջամտեմ և կհարցնեմ՝ ինչն է պատճառը | 2.1 |
| Կմոտենամ նրանց, կնոջը կհորդորեմ չհարվածել երեխային | 46.1 |
| Անմիջապես կզանգահարեմ ոստիկանություն | 1.2 |
| Երեխային կհեռացնեմ ծնողի մոտից | 0.8 |
| Կմոտենամ և ինքս կսկսեմ հարվածել կնոջը | 1.9 |
| Այլ | 2.2 |
| ԴՊ | 0.4 |

*Աղյուսակ 6. Իրավիճակի 1-ին հնարավոր արձագանքները*

Աղյուսակ 6-ում ներկայացված են ինչած պատասխանները: Այլ տարբերակի ներքո կան այնպիսի պատասխաններ, ինչպիսիք են՝ «Կնեղվեմ, կնյարդայնանամ և կհեռանամ» (0.5), «Նայած ինչ աստիճանի խփել» (0.5), «Կհորդորեմ տանը զբաղվել դաստիարակությամբ» (0.4), «Երեխայի իրավունքները ներկայացնող թուղթ ցույց կտամ» (0.3), «Հայացք կզցեմ դեպի կնոջը» (0.3), «Ոչինչ չեմ անի» (0.1), «Կախված է, թե ով է ծնողը» (0.1):




Հաջորդ դատողությունը չափում է հանդուրժողականությունը դիմացինի սեռական կողմնորոշման հանդեպ: Պատասխանները կրկին դասավորված են հանդուրժողականից դեպի անհանդուրժողական:

| | |
|---|---|
| Կքաջալերեմ նրան, քանի որ 21-րդ դարում որևէ մեկը իրավունք չունի սահմանափակել դիմացինի ազատությունը | 1.3 |
| Դա որևէ կերպ չի ազդի մեր ընկերության վրա, քանի որ կարծում եմ, որ ամեն ոք իրավունք ունի սեռական նախընտրության | 14.6 |
| Անպայման կզրուցեմ իր հետ՝ բացատրելով որ համասեռական լինելը սխալ է | 18.0 |
| Կառաջարկեմ նրան գնալ բժշկի կամ հոգեբանի մոտ | 17.3 |
| Կշարունակեմ շփումս՝ որոշ սահմանափակումներով | 10.7 |
| Անմիջապես կդադարեցնեմ շփումն իր հետ, քանի որ իմ շրջապատում չեն կարող լինել համասեռականներ | 29.4 |
| Կդիմեմ ֆիզիկական ուժի կիրառմանը՝ նրան ետդարձի բերելու համար | 6.5 |
| Կվառեմ/կպայթեմ/կտտանքների կենթարկեմ | 0.9 |
| Այլ | 0.7 |
| ԴՊ | 0.6 |

*Աղյուսակ 7. Իրավիճակի 2-ին հնարավոր արձագանքները*

Ի դեպ, «Կվառեմ/կսպանեմ/կտտանքների կենթարկեմ» պատասխանը նախապես չի առաջարկվել հարցվողներին, սակայն հաճախակի հնչելով պայմանավորված տեղ է գտել հիմնական տարբերակների շարքում՝ որպես ամենաանհանդուրժողական պատասխան: Այլ պատասխանի ներքո կոդավորված են «Կշփվեմ, հետո կդադարեցնեմ» (0.3), «Եթե փոխվի, կշարունակեմ շփվել» (0.3), «տղայի դեպքում՝ չեզոք, աղջկա դեպքում՝ կդադարեցնեմ *(իգական սեռի հարցվող)*» (0.1) պատասխանները:

> Ենթադրենք՝ Ձեր զուգընկերը աթեիստ է: Հարսանյաց արարողությունից առաջ նա հրաժարվում է գնալ եկեղեցի, իսկ Դուք գիտեք, որ Ձեր հարազատների մի մասը դրան բացասական երանգով կնայի: Ձեր հնարավոր գործողությունները…

Հաջորդ դատողությունը չափում է հանդուրժողականությունը կրոնական նախընտրության հանդեպ: «Հնարավոր չի աթեիստ զուգընկեր ունենալ» տարբերակը նախապես չի առաջարկվել հարցվողներին, սակայն բավական հաճախ հնչել է՝ լինելով ամենաանհանդուրժողական միտքը:

| | |
|---|---|
| Կբացատրեմ հարազատներիս, որ կրոնական հավատքը յուրաքանչյուրի որոշումն է և պարտադրանքի ենթակա չէ | 29.6 |
| Կհարգեմ զուգընկերոջս ցանկությունը, քանի որ ինքս էլ աթեիստ եմ | 5.7 |
| Հարսանյաց արարողություն եկեղեցում միանշանակ չի կայանա, քանի որ զուգընկերոջս ցանկությունն ինձ համար առաջնային է | 6.8 |
| Զուգընկերոջս կխնդրեմ հանուն ինձ այդ օրը հրաժարվել իր սկզբունքներից | 32.2 |
| Զուգընկերոջս կպարտադրեմ ամուսնանալ եկեղեցով, այլապես հարսանիքն ընդհանրապես չի կայանա | 13.7 |
| Կդադարեցնեմ շփումս զուգընկերոջս հետ | 1.0 |
| Հնարավոր չի աթեիստ զուգընկեր ունենալ | 8.3 |
| Այլ | 1.3 |
| ԴՊ | 1.4 |

*Աղյուսակ 8. Իրավիճակի 3-ին հնարավոր արձագանքները*

Այլ տարբերակներն են՝ «Կհարթեմ աթեիստական մղումները» (0.4), «Ավելի շուտ կտեղեկանամ այդ մասին» (0.4), «Կզրուցեմ զուգընկերոջս հետ» (0.3), «Կծեծեմ» (0.1), «Կբացատրեմ, որ ճիշտ չէ աթեիստ լինելը» (0.1):

Պատկերացրեք՝ երկար ժամանակ է, ինչ հանդիպում եք մի աղջկա/տղայի հետ, ում հետ հարաբերությունները դրական են: Հանկարծ պարզվում է, որ նրա հայրը ժամանակին մեղադրվել է մարդասպանության մեջ, սակայն կաշառքի դիմաց ազատվել է կալանավորումից: Ձեր հնարավոր գործողությունները...

Իրավիճակը չափում է հանդուրժողականությունը հանցագործությունների՝ մարդասպանություն, կաշառակերություն, հանդեպ:

| | |
|---|---|
| Ամեն ինչ արդեն անցյալում է, իսկ անցյալի սխալները չպետք է պայմանավորեն ներկա փոխհարաբերությունները | 15.9 |
| Ուշադրություն չեմ դարձնի, քանի որ զուգընկերս որևէ կապ չունի այդ ամենի հետ | 37.4 |
| Ուշադրություն չեմ դարձնի, քանի որ ինձ համար կարևոր է իմ և զուգընկերոջս հարաբերությունների ամրությունը | 24.8 |
| Կհարցնեմ զուգընկերոջս կարծիքը հոր արարքի մասին | 0.8 |
| Կարծիք կհարցնեմ ընտանիքիցս, եթե նրանք դրանում խնդիր չեն տեսնում չեմ ծանրացնի այդ հարցը | 12.1 |
| Անմիջապես չեմ դադարեցնի, բայց սահմանափակում կդնեմ, ինքս էլ իր հետ կշփվեմ, ընտանիքի հետ՝ ոչ | 0.6 |
| Կշարունակեմ շփումս զուգընկերոջս հետ, սակայն նրան կարգելեմ շփվել ընտանիքի հետ | 3.4 |
| Անմիջապես կխզեմ հարաբերություններս զուգընկերոջս հետ, քանի որ նրա ընտանիքի ինչպիսին լինելը ինձ համար առաջնային է | 3.2 |
| Այլ | 0.7 |
| ԴՊ | 1.1 |

*Աղյուսակ 9. Իրավիճակի 4-ին հնարավոր արձագանքները*

Այլ տարբերակներն են՝ «Կշարունակեմ, եթե նրա անձի վրա ոչ մի հետք չի թողել այդ իրադարձությունը» (0.2), «Եթե պիտի միասին ապրեմ, չեմ ապրի, եթե հեռու՝ նորմալ է» (0.1), «Կպարզեմ այդ լուրը թաքցնելու պատճառը, նոր կորոշեմ» (0.1), «Կծանոթանամ հոր հետ՝ սեփական կարծիքի համար» (0.1), «Եթե հիմնավոր լինի, կներեմ» (0.1), «Կշարունակեմ շփումս և կհարկադրեմ չգնա հոր ճանապարհով» (0.1):

Պատկերացրեք մի իրավիճակ, երբ տեսնում եք, որ Ձեր եղբայրը վիճում է Ձեզ անծանոթ երիտասարդի հետ: Լսելով վեճի թեման՝ նկատում եք, որ իրականում Ձեր եղբայրը հարցին մոտենում է սուբյեկտիվորեն և արդարացի չէ իր մեղադրանքներում: Ձեր հնարավոր գործողությունները…

Հաջորդ իրավիճակը չափում է հանդուրժողականությունը անարդարության հանդեպ:

| | |
|---|---|
| Առանց վայրկյան անգամ մտածելու կպաշտպանեմ եղբորս պարզապես նրա համար, որ եղբայրս է | 8.8 |
| Այդ պահին կպաշտպանեմ եղբորս, հետագայում իր հետ զրույցում կբացատրեմ որ իրականում նա սխալ էր | 68.0 |
| Որևէ կերպ չեմ խառնվի վեճին, ինչպես սարքել են վեճը, թող այդպես էլ լուծեն | 5.6 |
| Կփորձեմ ճշտել վեճի մանրամասները և կպաշտպանեմ այն կողմին, որը ըստ իս ճիշտ է | 10.5 |
| Միանշանակ կանգնեմ արդարության կողմը, քանի որ այն ինձ համար ամենակարևոր արժեքներից է | 6.2 |
| Այլ | 0.4 |
| ԴՊ | 0.5 |

*Աղյուսակ 10. Իրավիճակի 5-ին հնարավոր արձագանքները*

Իսկ այլ տարբերակներն են՝ «Կփորձեմ դադարեցնել վեճը» (0.3), «Ոստիկանություն կկանչեի» (0.1):

## Որքանո՞վ են ուսանողները համաձայն դատողությունների հետ. հանդուրժողականության չափում

Ուսանողների շրջանում հանդուրժողականությունը չափելու նպատակով իրականացվել է նաև Լայկերտի սանդղակով դատողությունների գնահատում: Ընդհանուր առմամբ գնահատվել են հավասար քանակությամբ դրական և բացասական դատողություններ, որոնք ուղղված են տարբեր երևույթների վերաբերյալ ուսանողների դիրքորոշումը վերհանելուն: Տեխնիկան թույլ է տալիս վերջում տեղավորել դատողությունները մեկ սանդղակում և դուրս բերել դատողություններ, որոնց նկատմամբ հարցվողները առավելագույնս հանդուրժող և անհանդուրժող են:

Նախքան այդ դիտարկենք ուսանողների դիրքորոշումը դատողությունների հանդեպ, ինչպես նաև ցույց տանք այդ դիրքորոշումը՝ ըստ սեռային բաշխման:

| *Աղքատներն ու թափառաշրջիկներն իրենք են մեղավոր իրենց խնդիրների համար* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 21.0 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 43.8 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 23.7 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 10.7 |
| ԴՊ | 0.8 |

*Աղյուսակ 11. Դատողություն 1-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 22.4 | 20.0 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 45.1 | 43.0 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 21.5 | 25.2 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 9.5 | 11.6 |
| ԴՊ | 1.5 | 0.2 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 12. Դատողություն 1-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Տեսնում ենք, որ ուսանողները հիմնականում համաձայն են այն մտքի հետ, որ աղքատներն ու թափառաշրջիկները իրենք են մեղավոր իրենց խնդիրների համար, ընդ որում՝ թե՛ արական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչների շրջանում պատկերն գրեթե նույնն է:

| Թափթփված տեսքով մարդկանց հետ շփվելը տհաճ է | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 41.0 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 30.4 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 19.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 8.3 |
| ԴՊ | 0.5 |

*Աղյուսակ 13. Դատողություն 2-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 41.0 | 41.0 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 28.4 | 31.8 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 20.5 | 19.3 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 9.5 | 7.5 |
| ԴՊ | 0.6 | 0.4 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 14. Դատողություն 2-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Ինչ վերաբերում է հաջորդ դատողության հետ համաձայն լինելուն, որ թափթփված տեսքով մարդկանց հետ շփվելը տհաճ է, թե՛ արական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչների պարագայում համաձայնվողների տոկոսը մեծ է։

| Մտավոր խնդիրներ ունեցող անձինք ևս պետք է հավասար ներառված լինեն հասարակությունում | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 58.6 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 22.3 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 13.3 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 5.0 |
| ԴՊ | 0.8 |

*Աղյուսակ 15. Դատողություն 3-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 52.7 | 62.7 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 24.9 | 20.4 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 15.5 | 11.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 6.3 | 4.2 |
| ԴՊ | 0.6 | 0.9 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 16. Դատողություն 3-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

ՈՒսանողները մեծամասամբ համաձայն են այն մտքի հետ, որ մտավոր խնդիրներ ունեցող անձինք ևս պետք է հավասար ներառված լինեն հասարակությունում, ընդ

որում՝ իգական սեռի հարցվողների պարագայում ծայրահեղ՝ լիովին համաձայնվողների թիվը ավելի մեծ է:

| *Ներգաղթյալները պետք է ունենան նույն իրավունքները, ինչ տեղացիները* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 28.9 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 27.0 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 25.5 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 18.0 |
| ԴՊ | 0.6 |

*Աղյուսակ 17. Դատողություն 4-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 22.8 | 33.1 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 26.2 | 27.6 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 27.4 | 24.1 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 23.0 | 14.5 |
| ԴՊ | 0.6 | 0.7 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 18. Դատողություն 4-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Նույն պատկերը առկա է նաև ներգաղթյալների հանդեպ վերաբերմունքում: Այն մտքի հետ, որ ներգաղթյալները պետք է ունենան նույն իրավունքները, ինչ տեղացիները, լիովին համաձայնվողների թիվը իգական սեռի շրջանում ավելի մեծ է:

| *Եթե ընկերս դավաճանել է ինձ, ես կներեմ, քանի որ կարևորը հարաբերությունները պահպանելն է* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 5.7 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 17.5 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 25.5 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 49.1 |
| ԴՊ | 2.2 |

*Աղյուսակ 19. Դատողություն 5-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 6.0 | 5.5 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 21.5 | 14.7 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 27.7 | 23.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 42.0 | 54.2 |
| ԴՊ | 2.8 | 1.8 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 20. Դատողություն 5-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Ուսանողների մեծ մասը ընդհանրապես համաձայն չէ ներել ընկերոջ դավաճանությունը հանուն հարաբերությունները պահպանելուն: Ի դեպ այս դեպքում ևս իգական սեռի ներկայացուցիչները ավելի ծայրահեղական են հարցի նկատմամբ, քան արական սեռը:

| *Նույնիսկ եթե ես ունեմ իմ կարծիքը, ես պատրաստ եմ լսել այլ կարծիքներ ևս* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 74.7 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 15.8 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 6.0 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 3.0 |
| ԴՊ | 0.5 |

*Աղյուսակ 21. Դատողություն 6-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 68.7 | 78.9 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 19.2 | 13.5 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 7.3 | 5.0 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 3.5 | 2.6 |
| ԴՊ | 1.3 | 0.0 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 22. Դատողություն 6-ին տրված գնահատականները՝ըստ սեռի*

Ուսանողները գերակշիռ առավելությամբ համաձայն են այն մտքի հետ, որ պատրաստ են սեփական կարծիքի առկայության դեպքում, լսել այլ կարծիքներ ևս: Իգական սեռը այս դեպքում էլ է ավելի ծայրահեղական հարցին և լիովին համաձայնվողների մեջ ավելի մեծ է նրանց մասնաբաժինը:

| *Եթե անգամ ինչ-որ մեկը ինձ հետ կոպիտ է, ես նրան համարժեք չեմ պատասխանի* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 23.5 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 22.9 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 24.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 27.4 |
| ԴՊ | 1.4 |

*Աղյուսակ 23. Դատողություն 7-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 12.3 | 31.4 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 18.6 | 25.8 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 29.7 | 21.3 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 37.8 | 20.2 |
| ԴՊ | 1.6 | 1.3 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 24. Դատողություն 7-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Էական տարբերություն է նկատելի տղաների և աղջիկների պատասխանների միջև, երբ գնատահում են դիմացինի՝ կոպիտ լինելու պարագայում նրան համարժեք չպատասխանելու գաղափարը: Աղջիկները ավելի հանդուրժող են այս հարցում և հիմնականում համաձայն այս մտքի հետ, իսկ տղաների պարագայում հակառակն է. վերջիններս հիմնականում համաձայն չեն:

| *Կարծում եմ, որ տարբեր ազգերի միջև ամուսնությունները քայքայում են ազգային ինքնությունը* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 19.9 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 21.0 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 28.5 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 29.4 |
| ԴՊ | 1.2 |

*Աղյուսակ 25. Դատողություն 8-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 22.4 | 18.2 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 20.5 | 21.3 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 30.0 | 27.4 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 25.8 | 32.0 |
| ԴՊ | 1.3 | 1.1 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 26. Դատողություն 8-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Ուսանողները մեծամասամբ համաձայն չեն այն մտքի հետ, որ տարբեր ազգերի միջև ամուսնությունները քայքայում են ազգային ինքնությունը: Ընդ որում, իգական սեռի ներկայացուցիչները ավելի հակված են համաձայն չլինել մտքի հետ:

| *Գտնում եմ, որ իսկական բարեկամություն կարող է լինել միայն միևնույն ազգի ներկայացուցիչների միջև* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 7.5 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 11.1 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 28.5 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 51.6 |
| ԴՊ | 1.3 |

*Աղյուսակ 27. Դատողություն 9-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 7.3 | 7.7 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 13.6 | 9.4 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 32.5 | 25.6 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 44.7 | 56.4 |
| ԴՊ | 1.9 | 0.9 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 28. Դատողություն 9-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Ուսանողները հիմնականում համաձայն չեն այն մտքի հետ, որ իսկական բարեկամություն կարող է լինել միայն միևնույն ազգի ներկայացուցիչների միջև: Իգական սեռի ներկայացուցիչները ավելի ծայրահեղական են համաձայն չլինելու հարցում:

| *Հաճախ եմ զգում իմ ազգի գերակայությունը այլ ազգերի նկատմամբ* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 23.9 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 19.7 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 26.3 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 27.9 |
| ԴՊ | 2.2 |

*Աղյուսակ 29. Դատողություն 10-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 24.0 | 23.9 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 21.1 | 18.6 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 25.6 | 26.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 27.4 | 28.3 |
| ԴՊ | 1.9 | 2.4 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 30. Դատողություն 10-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Իգական և արական սեռի ներկայացուցիչների վերաբերմունքը գրեթե նույնական է այն մտքի հետ, որ իրենք հաճախ են զգում իրենց ազգի գերակայությունը այլ ազգերի նկատմամբ։

| *Սիրում եմ իմ ազգը, բայց հարգում եմ այլ ազգերի լեզուն և մշակույթը* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 79.5 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 15.7 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 2.7 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 1.7 |
| ԴՊ | 0.4 |

*Աղյուսակ 31. Դատողություն 11-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 72.2 | 84.6 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 21.2 | 11.9 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 3.2 | 2.4 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 2.5 | 1.1 |
| ԴՊ | 0.9 | 0.0 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 32. Դատողություն 11-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Ուսանողները կտրուկ դրական վերաբերմունք ունեն այն մտքին, որ սիրում են իրենց ազգը, բայց հարգում են այլ ազգերի լեզուն և մշակույթը ևս։

| *Գտնում եմ որ անհրաժեշտ է «մաքրել» սեփական մշակույթը այլ մշակույթների ազդեցությունից* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 32.3 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 28.2 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 21.1 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 17.2 |
| ԴՊ | 1.2 |

*Աղյուսակ 33. Դատողություն 12-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 31.5 | 32.9 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 28.1 | 28.3 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 19.3 | 22.4 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 18.9 | 16.0 |
| ԴՊ | 2.2 | 0.4 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 34. Դատողություն 12-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Ուսանողները ոչ միանշանակ են արձագանքել այն մտքին, որ անհրաժեշտ է «մաքրել» սեփական մշակույթը այլ մշակույթների ազդեցությունից: Մտքի հետ կան համաձայնվողներ և չհամաձայնվողներ և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչների շրջանում:

| *Մի քանի լուծարք ձախողելուց հետո ես պատրաստ եմ կաշառքով ստանալ գնահատական* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 5.6 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 8.5 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 12.0 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 72.6 |
| ԴՊ | 1.3 |

*Աղյուսակ 35. Դատողություն 13-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 7.3 | 4.4 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 11.0 | 6.8 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 14.5 | 10.3 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 65.0 | 77.8 |
| ԴՊ | 2.2 | 0.7 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 36. Դատողություն 13-ին տրված գնահատականները՝ըստ սեռի*

ՈՒսանողները ավելի միանշանակ են արձագանքել մի քանի լուծարք ձախողելուց հետո կաշառքով գնահատական ստանալու մտքին: Իգական սեռը առավել համաձայն չէ ստանալ գնահատական կաշառքի դիմաց:

| *Ես չեմ ամուսնանա ինձնից ցածր կրթական մակարդակ ունեցող մարդու հետ* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 11.4 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 13.6 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 28.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 44.5 |
| ԴՊ | 1.7 |

*Աղյուսակ 37. Դատողություն 14-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 11.0 | 11.5 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 12.6 | 14.3 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 28.4 | 29.2 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 46.4 | 43.2 |
| ԴՊ | 1.6 | 1.8 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 38. Դատողություն 14-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Հարցվողները հիմնականում համաձայն չեն ամուսնանալ իրենցից ցածր կրթական մակարդակ ունեցողի հետ: Ընդ որում, այս պարագայում արական սեռի ներկայացուցիչները չնչին տարբերությամբ, սակայն ավելի կտրուկ են տրամադրված հարցին:

| *Եթե իմ հարազատ աղջիկներից մեկը հղիանա առանց ամուսնության, ես կդադարեմ շփվել նրա հետ* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 8.0 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 9.6 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 27.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 51.0 |
| ԴՊ | 3.6 |

*Աղյուսակ 39. Դատողություն 15-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 10.7 | 6.1 |
| վելի շուտ համաձայն եմ | 14.2 | 6.4 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 28.1 | 27.6 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 41.6 | 57.5 |
| ԴՊ | 5.4 | 2.4 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 40. Դատողություն 15-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Ուսանողները կարծում են, որ չեն դադարի շփվել իրենց ծանոթ աղջկա հետ, եթե վերջինս հղիանա առանց ամուսնության: Ընդ որում, իգական սեռի ներկայացուցիչները ավելի հանդուրժող են երևույթի հանդեպ, քան տղաները:

| *Ես պատրաստ եմ ամուսնանալ տարիքով ինձնից փոքր տղայի (տղաների դեպքում՝ տարիքով մեծ աղջկա) հետ* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 18.0 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 20.7 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 21.9 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 37.1 |
| ԴՊ | 2.3 |

*Աղյուսակ 41. Դատողություն 16-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 26.8 | 11.8 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 28.4 | 15.4 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 17.7 | 24.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 23.6 | 46.5 |
| ԴՊ | 3.5 | 1.5 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 42. Դատողություն 16-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Տղաները ավելի շատ են համաձայն ամուսնանալ տարիքով իրենցից մեծ աղջկա հետ, քան աղջիկները՝ իրենցից փոքր տղաների հետ:

| *Ինձ համար նորմալ է, որ ընտանիքում կինը կարող է ավելի շատ վաստակել, քան տղամարդը* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 43.2 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 22.4 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 15.8 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 17.6 |
| ԴՊ | 1.0 |

*Աղյուսակ 43. Դատողություն 17-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 30.9 | 51.8 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 24.6 | 20.8 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 20.2 | 12.7 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 23.7 | 13.4 |
| ԴՊ | 0.6 | 1.3 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 44. Դատողություն 17-ին տրված գնահատականները՝ ըստ սեռի*

Կանայք ավելի շատ են համաձայն այն մտքի հետ, որ նորմալ է, որ ընտանիքում կինը կարող է ավելի շատ վաստակել, քան տղամարդը: Արական սեռի

ներկայացուցիչները ավելի կտրուկ են դատողության հետ համաձայն չլինելու հարցում:

| *Ես կարծում եմ, որ սփյուռքահայերը չպետք է գան Հայաստան ապրելու, քանի որ իրենց հետ բերում են օտար ազգերի նիստուկացը* | |
|---|---|
| Լիովին համաձայն եմ | 4.1 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 10.0 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 22.4 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 62.7 |
| ԴՊ | 0.8 |

*Աղյուսակ 45. Դատողություն 18-ին տրված գնահատականները*

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Լիովին համաձայն եմ | 6.0 | 2.9 |
| Ավելի շուտ համաձայն եմ | 11.7 | 8.8 |
| Ավելի շուտ համաձայն չեմ | 21.5 | 23.0 |
| Ընդհանրապես համաձայն չեմ | 59.2 | 65.1 |
| ԴՊ | 1.6 | 0.2 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

*Աղյուսակ 46. Դատողություն 18-ին տրված գնահատականները՝ըստ սեռի*

Ուսանողները ընդհանուր առմամբ համաձայն չեն այն մտքի հետ, որ սփյուռքահայերը չպետք է գան Հայաստան ապրելու, քանի որ իրենց հետ բերում են օտար ազգերի նիստուկացը: Տղաների շրջանում, ամեն դեպքում, ավելի շատ են մարդիկ, ովքեր համաձայն են մտքի հետ:

Գրաֆիկ 8-ում տեսնում ենք համեմատական պատկերը, այսինքն՝ որ դատողությանը ընդհանուր առմամբ որքանով են համաձայնել կամ անհամաձայնություն հայտնել ուսանողները: Տեսնում ենք, որ ամենաշատը դժվարացել են պատասխանել այն մտքին, թե ինչպես կվարվեմ, եթե իրենց ծանոթ աղջիկներից մեկը հղիանա առանց ամուսնության:




*Գրաֆիկ 8. Դատողությունների համեմատական պատկերը*

Սակայն ասելու համար, թե ընդհանուր առմամբ որ դատողության հանդեպ են առավել անհանդուրժող և որի հանդեպ առավել հանդուրժող, անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշ դատողություններ դրական, իսկ որոշները՝ բացասական երանգավորմամբ են, ուստի դրական դատողության հանդեպ համաձայնությունը հակակշռում է բացասականի հանդեպ համաձայնությանը: Այդ նպատակով Լայկերտի սանդղակում արվում է փոփոխություն և դրական դատողությունների

համար (1-ընդհանրապես համաձայն չեմ, 4-լիովին համաձայն եմ) փոխվում է բացասական դատողությունների համար (1- լիովին համաձայն եմ, 4-ընդհանրապես համաձայն չեմ): Արդյունքում մի հարցության վրա դնելով դատողությունները, կարող ենք իրար հետ համեմատել և դուրս բերել առավել մեծ և առավել փոքր հանդուրժողականությամբ դատողությունները: Հաշվարկն իրականացնելու համար տվյալ տարբերակը տված հարցվողների թվաքանակը բազմապատկում ենք տարբերակին տրված արժեքով՝ 1-4՝ դրական և բացասական դատողությունների համար արդեն փոփոխված սանդղակով:

Աղյուսակ 47-ում ունենք ստացված ընդհանուր թիվը՝ ամենափոքրը՝ 1117, ամենամեծը՝ 2878. սրանք այն դատողություններն են, որոնց հանդեպ հարցվողները առավել հանդուրժող և անհանդուրժողն են: Միջնամասում տեղակայված են ծայրակետերի միջև ընկած թվերը, որոնք ըստ էության չեզոք դատողություններն են. որքան մոտ կենտրոնին, այնքան ավելի չեզոք է հարցվածների դիրքորոշումը այդ դատողության նկատմամբ: Վերջին սյունակում արված համարակալումը և գունավորումը ընդգծում են ծայրահեղ մոտեցումից դեպի չեզոք մոտեցում անցումը:

| | | |
|---|---|---|
| Մի քանի լուծարք ձախողելուց հետո ես պատրաստ եմ կաշառքով ստանալ գնահատական | 1117 | 1 |
| Եթե ընկերս դավաճանել է ինձ, ես կներեմ, քանի որ կարևորը հարաբերությունները պահպանելն է | 1355 | 2 |
| Թափթփված տեսքով մարդկանց հետ շփվելը տհաճ է | 1502 | 3 |
| Ես պատրաստ եմ ամուսնանալ տարիքով ինձնից փոքր տղայի (տղաների դեպքում՝ տարիքով մեծ աղջկա) հետ | 1661 | 4 |
| Գտնում եմ որ անհրաժեշտ է «մաքրել» սեփական մշակույթը այլ մշակույթների ազդեցությունից | 1707 | 5 |
| Աղքատներն ու թափառաշրջիկներն իրենք են մեղավոր իրենց խնդիրների համար | 1721 | 6 |
| Եթե անգամ ինչ-որ մեկը ինձ հետ կոպիտ է, ես նրան համարժեք չեմ պատասխանի | 1853 | 7 |
| Հաճախ եմ զգում իմ ազգի գերակայությունը այլ ազգերի նկատմամբ | 1962 | 8 |
| Կարծում եմ, որ տարբեր ազգերի միջև ամուսնությունները քայքայում են ազգային ինքնությունը | 2050 | 9 |
| Ներգաղթյալները պետք է ունենան նույն իրավունքները, ինչ տեղացիները | 2052 | 9 |

| | | |
|---|---|---|
| Ինձ համար նորմալ է, որ ընտանիքում կինը կարող է ավելի շատ վաստակել, քան տղամարդը | 2235 | 8 |
| Ես չեմ ամուսնանա ինձնից ցածր կրթական մակարդակ ունեցող մարդու հետ | 2343 | 7 |
| Եթե ինձ հարազատ աղջիկներից մեկը հղիանա առանց ամուսնության, ես կդադարեմ շփվել նրա հետ | 2431 | 6 |
| Գտնում եմ, որ իսկական բարեկամություն կարող է լինել միայն միևնույն ազգի ներկայացուցիչների միջև | 2486 | 5 |
| Մտավոր խնդիրներ ունեցող անձինք ևս պետք է հավասար ներառված լինեն հասարակությունում | 2573 | 4 |
| Ես կարծում եմ, որ սփյուռքահայերը չպետք է գան Հայաստան ապրելու, քանի որ իրենց հետ բերում են օտար ազգերի նիստուկացը | 2645 | 3 |
| Նույնիսկ եթե ես ունեմ իմ կարծիքը, ես պատրաստ եմ լսել այլ կարծիքներ ևս | 2793 | 2 |
| Սիրում եմ իմ ազգը, բայց հարգում եմ այլ ազգերի լեզուն և մշակույթը | 2878 | 1 |

*Աղյուսակ 47. Դատողությունների դասակարգումը՝ըստ հանդուրժողականության չափի*

Ամենափոքր թվին բնորոշ դատողության հանդեպ ուսանողները առավել անհանդուրժողն են. այն է «Մի քանի լուծարք ձախողելուց հետո ես պատրաստ եմ կաշառքով ստանալ գնահատական», իսկ ամենամեծ թվին բնորոշ դատողության հանդեպ առավել հանդուրժողը՝ «Սիրում եմ իմ ազգը, բայց հարգում եմ այլ ազգերի լեզուն և մշակույթը»։ Տրամաբանությունը ընկած է առավել անհանդուրժող դատողությունից դեպի չեզոք և չեզոքից դեպի առավել հանդուրժող դատողություն անցման մեջ։

## Մեդիա – հանդուրժողականություն. փոխազդո՞ղ հասկացություններ

